ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԸՆԴՀՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ
ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Մ. Մ. ԻՍՊԻՐՅԱՆ

15 հունվարի 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15. 01. 2024թ. հ. 4 նիստի

Օրակարգ՝

Վալտեր Տիգրանի Բերբերյանի՝ «Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.)» ատենախոսության քննարկում:

Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը, բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյանը, բ. գ. դ., պրոֆ. Էդ. Մկրտչյանը, մ. գ. թ., պ/պ Գ. Խալաթյանը, բ. գ. թ., դոց. Ա. Մարտիրոսյանը, բ. գ. թ., դոց. Ռ. Զուլֆայանը, բ. գ. թ., դոց. Ա. Յուզբաշյանը, բ. գ. թ., դոց. Ս. Ամիրջանյանը, բ. գ. թ., դոց. Լ. Ավետիսյանը, մ. գ. թ., դոց. Ս. Թորգոմյանը, բ. գ. թ. Անահիտ Հարությունյանը, Ա. Ավագյանը::

Լսեցին. Իբրև առաջատար կազմակերպություն՝ հայոց լեզվի ամբիոնի նիստի քննարկմանը ներկայացված հիշյալ ատենախոսության վերաբերյալ բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյանի և բ. գ. թ., դոց. Լ. Ավետիսյանի գրավոր կարծիքները:

Նշվեց, որ հայ լեզվաբանության պատմության ուսումնասիրության, հայ ոճագիտական մտքի ձևավորման և զարգացման պատմության քննության համար կարևոր է հիշյալ ժամանակահատվածում ստեղծվող համապատասխան գրականությունը: Հայ ոճագիտությանը անդրադարձել են մեծ թվով ուսումնասիրողներ (Է. Աղայան, Գ. Ջահուկյան, Պ. Պողոսյան, Խ. Բադիկյան, Հ. Հարությունյան, Գ. Վահանյան, Ա. Մարության, Ֆ. Խլղաթյան, Ս. Մելքոնյան, Ս. Էլոյան, Ռ. Մկրտչյան, Լ. Եզեկյան, Յու. Ավետիսյան, Թ. Շահվերդյան, Ա. Գալստյան Դ. Գյուրջինյան, և ուրիշներ):

Այդ շրջանի հայ ոճագիտական մտքի պատմության քննությունը կարող է հետաքրքիր իրողություններ վեր հանել: Նման ուսումնասիրություն է Վ. Բերբերյանի՝

Scanned with CamScanner

հրապարակային պաշտպանության ներկայացված «Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.)» թեկնածուական ատենախոսությունը: Հեղինակը հայ ոճագիտական մտքի ձևավորման և զարգացման պատմության քննության փորձ է կատարել:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից և եզրակացություններից, ունի օգտագործված գրականության ցանկ, ինչպես նաև հավելված:

Ներածության մեջ համառոտ անդրադարձ է կատարվում ոճագիտության ձևավորմանը, ինչպես նաև հայ ոճագիտական մտքի պատմության փուլերին՝ ա) հայ ոճագիտական միտքը 1950-60-ական թթ., բ) հայ ոճագիտական միտքը 1970-90-ական թթ., գ) հայ ոճագիտական միտքը 2000-2020-ական թթ.):

Առաջին գլխում փորձ է արվում ներկայացնել հնչյունային ոճագիտության վերաբերյալ եղած ուսումնասիրությունները: Առանձին-առանձին ներկայացվում են այնպիսի երևույթներ, ինչպիսին են բաղաձայնույթը, առձայնույթը, նմանաձայնությունը, հնչերանգը, դադարը, շեշտը և հանգը, որոնք, հայտնի է, ներառված են նաև գրականագիտության, ճարտասանական արվեստի մասնագիտական գրականության մեջ: Հեղինակը նկատում է, որ մինչև այժմ հետազոտված չեն հայոց լեզվի հնչյունային համակարգի ոճագիտական զարգացման ընթացքը և հիմնախնդիրները (տե՛ս ատենախոսություն, էջ 13):

Աշխատանքի երկրորդ գլուխը վերնագրված է «Բառային ոճագիտական միտքը»: Այստեղ անդրադարձ է կատարվում բառային ոճագիտության հիմնահարցերի վերաբերյալ մեզանում առկա տեսական գրականությանը՝ ըստ բառերի ձևաիմաստային խմբերի և բառապաշարի շերտերի ոճագիտական վերլուծությունների, ինչպես նաև ըստ դարձվածային ոճագիտության: Ըստ ատենախոսի՝ լեզվական մակարդակին վերաբերող ուսումնասիրություններից աստիճանաբար անցում կատարվեց խոսքային-ոճական մակարդակին. բառն սկսեց քննվել որպես ոճական-արտահայտչական միավոր (տե՛ս ատենախոսություն, էջ 58):

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվում է հայ քերականական ոճագիտական միտքը՝ ըստ լեզվի ձևաբանական (նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի ոճական արժեքին

Scanned with CamScanner

վերաբերող մի քանի հարցերի քննությունը մասնագիտական գրականության մեջ) և շարահյուսական մակարդակների: Վերջինիս առումով հեղինակը շեշտում է, որ ոճագիտական աշխատանքներում լեզվական գիտելիքների, մասնավորապես քերականական տեղեկությունների մատուցումն արդարացված չէ (տե՛ս ատենախոսություն, էջ 69):

Առանձնակի անդրադարձ է կատարվում 2000-ական թթ. հայ մասնագիտական գրականության մեջ հատուկ ուսումնասիրության նյութ դարձած տեքստագիտությանը (գրվածքագիտություն և բնագրագիտություն, որոնք լեզվաբանության առանձին բնագավառներ են, քան բուն իմաստով՝ ոճագիտության):

Չորրորդ գլուխը վերաբերում է լեզվաբանական գրականության մեջ ոճերի դասակարգման սկզբունքներին: Դիտարկվում են հայ լեզվաբանների աշխատանքներում առանձնացվող ոճերի տեսակները և նրանց վերաբերող տարբեր դրույթները. գործառական (Գ. Ջահուկյան, հետագայում նաև Լ. Եզեկյան, Ռ. Շալունց, Յու. Դավթյան, Յու. Ավետիսյան և ուրիշներ), իրադրական և անհատական (Գ. Ջահուկյան, Պ. Պողոսյան, Ա. Մարության, Ֆ. Խլղաթյան, Լ. Եզեկյան և ուրիշներ): Հեղինակը նշում է, որ ոճերի տեսակների և ենթատեսակների քննությունը կարող է ի հայտ բերել լեզվական նոր փաստեր (տե՛ս ատենախոսություն, էջ 91):

Հինգերորդ գլուխը խորագրված է «Լեզվի պատկերավորման-արտահայտչական համակարգ. ոճագիտական քննության համառոտ պատմություն»: Այստեղ ատենախոսն անդրադառնում է հայ ոճագիտական մտքի պատմության մեջ պատկերավորման (մակդիր, համեմատություն, փոխաբերություն և անձնավորում), ինչպես նաև արտահայտչական միջոցների (ճարտասանական դարձույթներ, կրկնություն, հակադրություն և աստիճանավորում) վերաբերյալ առկա մոտեցումներին, որոնք, իրոք, ճարտասանական արվեստի իրողություններ են՝ հետագայում անցած ոճագիտությանը (թեև ոչ բոլոր նման աշխատություններում):

Աշխատանքի վերջում բերվում են եզրակացություններ:

Աշխատանքում դրական բնութագրական հատկանիշներ են հետևյալները.

1. Ուսումնասիրությունը կատարված է նյութի համակողմանի իմացությամբ: Աշխատանքի բովանդակությունը հիմնականում համապատասխանում է քննության առարկային:

Scanned with CamScanner

2. Ատենախոսության համար հատկանշական է հարցադրումների ընդգրկունությունը:

3. Ատենախոսն իր նյութին անմիջաբար առնչվող աղբյուրներին անդրադառնալիս ցուցաբերել է վերլուծության գիտական պատշաճ կարողություն:

Ունենք նկատառումներ՝ աշխատանքի էական կողմերի վերաբերյալ:

1. Աշխատանքը ինքնին կշահեր, եթե ատենախոսը լիովին անդրադառնար հիշյալ ժամանակահատվածում հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրներին, դրանց լուծման ուղիներին և ձևերին՝ իբրև հայերենագիտական ուրույն բնագավառ: Չնայած առկա են որոշակի դիտարկումներ, բայց հիմնախնդրի ամբողջական պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է հստակ և գիտական դիրքորոշում:
2. Թեև ատենախոսը յուրաքանչյուր ենթագլուխ ամփոփում է համապատասխան վերլուծությամբ, սակայն ցանկալի էր մասնագիտական գրականության մեջ առկա դրույթներից հետևություններ կատարելիս նշել լեզվաբաններին՝ ցույց տալով ուսումնասիրության խնդրո առարկայի վերաբերյալ նրանց մոտեցումների ընդհանրությունները և տարբերությունները:
3. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը ծանոթ լիներ մի շարք այլ լեզվաբանների (Վ. Առաքելյան, Վ. Համբարձումյան, Շ. Բալլի, Ա. Գվոզդև, Վ. Վինոգրադով և ուրիշներ) աշխատություններին (օրինակ՝ Վ. Առաքելյանի «Գր. Նարեկացու լեզուն և ոճը», Ե., 1975, նույն հեղինակի աշխատությունները՝ նվիրված Խորենացու, Փարպեցու, Եզնիկի և այլոց լեզվի և ոճի քննությանը, Վ. Համբարձումյանի «Հովնան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» աշխատությունը (Ե., 2013), ինչպես նաև նրա «Լեզու, ոճ, խոսք» հրապարակումը («Բանբեր Երևանի համալսարանի», 1981, հմ. 3): Սրանցով իսկ կդիտարկվեին հայ ոճագիտության մտքի զարգացման պատմությունը, ինչպես նաև տեքստի գեղագիտական և լեզվապատկերային այն առանձնահատկությունները, որոնց դեպքում գեղարվեստական խոսքը հակադրվում է առօրյա կամ այլ կարգի դրսևորումներին՝ խոսքի կազմության գեղագիտական

Scanned with CamScanner

հատկանիշների պարունակման տարբերություններով, հատկապես հեղինակային ոճական հակումների, լեզվաոճական անհատականության ձգտումների ցուցաբերմամբ:

4. Հավելվածում, որում համառոտակի անդրադարձ է կատարվում հայ ոճագիտական տերմինաբանության պատմությանը, ցանկալի էր տեսնել նաև Վ. Համբարձումյանի ուսումնասիրությունը. «XVII-XIX դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը» // «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 2, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 257-317:

5. Հայ ոճագիտության պատմությունը, թերևս սկիզբ է առնում 1940-ական թթ. կեսերից, որպես, այսպես կոչված, պատմական ոճագիտություն: Ի դեպ՝ այդ ոճագիտությունը անցել է գիտակարգային մի քանի ուղիներով՝ նկարագրական-գործնական ոճագիտություն, տեսական ոճագիտություն, պատմական ոճագիտություն, որոնց առանձնացումը նման թեմայով աշխատանքում տեղին կլիներ:

6. Ուսումնասիրության լեզուն ընդհանուր առմամբ գիտական է, սակայն հանդիպում են լեզվական սայթաքումներ. «Ատենախոսությունը կազմված է .... *հինգ գլուխներից....*» (էջ 4): «Փորձի արդյունքը ցույց է տվել, որ տարբեր *մարդկանց մոտ* հնչյունի *ընկալումը* նման է» (էջ 26): Հմմտ. նաև էջ 27: «Մենք կարծում ենք, որ Ս. Մելքոնյանի դասակարգումը *առավել* համոզիչ է, քանի որ *հնարավորություն է տալիս* ուսումնասիրողին համակողմանիորեն *բնութագրել* երևույթը» (էջ 40) և այլն:

Հայտնի է, որ *տպավորությունը*՝ որպես հոգեբանական եզրույթ, հատկանշվում է պատկերի և հույզի զուգորդությամբ, մինչդեռ ատենախոսության հեղինակը գիտական խոսքում գործածում է *մեր տպավորությամբ* բառակապակցությունը (հմմտ. էջ 63, 70, 105). «*Մեր տպավորությամբ*, հարցի քննությունը սկիզբ է առել Գ. Վահանյանից....» (էջ 61):

7. Համակարգչային շարվածքում կան սպրդումներ՝ Պեշիկթաշլյան, ոչ թե առանց լ-ի, (տե՛ս նաև էջ 26, 37, 44, 47, 62, 67, 76, 84, 87, 93, 101-103, 114):

Scanned with CamScanner

8. Նկատվում է գրականության ոչ ճիշտ նշում. օրինակ՝ Ա. Այտընյանի աշխատության հրատարակության ամբողջական տվյալները են՝ «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և յաւելուածով», որ տպագրվել է Վիեննայում, 1866-ին, ոչ թե Երևանում, 1987-ին:

Այսպիսով, գրախոսների ընդհանուր եզրակացությունն այն է, որ Վալտեր Տիգրանի Բերբերյանի «Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.)» ատենախոսությունը կատարված է պատշաճ մակարդակով և բավարարում է ներկայացվող պահանջները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքին:

Որոշեցին. 1. Վալտեր Տիգրանի Բերբերյանի՝ «Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.)» ատենախոսությունը կարևոր աշխատանք է: Այն բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և Ժ.02.01 -«Հայոց լեզու» մասնագիտության թվանիշին:

2. Աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Քվեարկություն. Կողմ՝ տասներեք (12), դեմ՝ զրո (0), ձեռնպահ՝ զրո (0):

Նիստի նախագահ՝ ամբիոնի վարիչ,
բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Նիստի քարտուղար՝ Ժ. Կ. Հովհաննիսյան

15.01.2024

Հաստատում եմ բ.գ.դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի ստորագրությունը:
Հ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
գիտական քարտուղար, մ.գ.թ., դոց. Մ. Իսպիրյան

Scanned with CamScanner